ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> մարտի 2019 թվականի N: 86-Ա **ք.Գյումրի**

«ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «իա» ենթակետի, 84-րդ հոդվածի 1-ին կետի «իգ»,«իդ» ենթակետերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի N 259-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերության) 2019 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ընկերության 2019 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ընկերության տնօրենի վարձատրության չափը սահմանել ամսական 370000 Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝